ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀՀԿԳՄՍՆՄԱԱՊՁԲ-26/58

ք. Երևան «10» «06» 2026թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար՝ Հասմիկ Հակոբյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Զանգակ-97» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Սոկրատ Մկրտչյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են **30 օրից ավելի**:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել Հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անՀատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անՀատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել Հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են **30 օրից ավելի**,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին Հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև Հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին Հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 34980200 (երեսունչորս միլիոն ինը հարյուր ութսուն հազար երկու հարյուր) ՀՀ դրամ: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում գնորդը վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված

կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ:

5.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **6 աշխատանքային օրվա** ընթացքում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

5.4 Եթե պայմանագրի 5.3 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխՀատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական Հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական Հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.10 Կատարողն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի Կատարողի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N4) ստանալու դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը:

8.11 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.12 Պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1 և N 2 հավելվածները համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.13 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գ Ն Ո Ր Դ	Վ Ա Ճ Ա Ռ Ո Ղ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն Հասցեն՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3 Կառավարական տուն 2, ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն Հ/Հ 900011033447, ՀՎՀՀ 02696732	«Զանգակ-97» ՍՊԸ Հասցեն՝ ք. Երևան, Նոր Նորք 8 զանգվ. 30 շ, բն. 39, Հեռ.՝ (+374) 10-232-528, Էլ. փոստ՝ info@zangak.am «Ինեկոբանկ» ՓԲԸ, Հ/Հ 2050022077491001, ՀՎՀՀ 00830786,
Գլխավոր քարտուղար՝ Հակոբյան (ստորագրություն) Կ.Տ.	Տնօրեն՝ Մկրտչյան Սոկրատ (ստորագրություն) Կ.Տ.

Подписано цифровой подписью:
HAKOBYAN HASMIK 5610800161
DN: c=AM, cn=•••,
givenName=••••••,
serialNumber=5bdc672203a3,
cn=HAKOBYAN HASMIK
5610800161
Дата: 2026.06.09 19:18:06 +04'00'

Digitally signed by MKRTCHYAN SOKRAT
3510570316
Date: 2026.06.09 13:51:00 AMT

Հավելված N 1

«10» «06» *2026թ կնքված*

ՀՀԿԳՄՆՄԱՊՁԲ-26/58 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ – ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Ապրանքի						
		Անվանումը	**Տեխնիկական բնութագիրը**	Չափման միավորը	Քանակը	Միավորի գինը, ՀՀ դրամ	Ընդհանուր գինը, ՀՀ դրամ	Մատակարարման ժամկետը
1	**22111110/13**	**Դասագրքեր-1**	Գնման առարկա է հանդիսանում. «Զանգակ այբբենարան» **Հեղինակ՝** Ջուլիետա Գյուլամիրյան **Բովանդակային չափանիշներ** Պատկերազարդ այբբենարանը նախատեսված է Սփյուռքում հայերենը որպես մայրենի լեզու ուսումնառող երեխաների համար: **Տեխնիկական չափանիշներ** Չափսը՝ 20 x 28 սմ Էջերի թուղթը՝ 70 գ օֆսեթ էջերի տպ.՝ գունավոր Էջերի քանակը՝ 112 Կազմի թուղթը՝ 250 գ/քմ կավճապատ ստվարաթուղթ Կազմի տպ.՝ գունավոր Կազմարարությունը՝ թելակար, ջերմասոսինձ, լամինացիա Գքրի քաշը՝ 252գր Գրքի ծավալը՝ 392սմ^3	**հատ**	**774**	**3000**	**2322000**	Մինչև 2026թ. օգոստոսի 20-ը
2	**22111110/14**	**Դասագրքեր-2**	Գնման առարկա է հանդիսանում. **«Փոքր Միեր».** ռուսալեզու սովորողների համար **Հեղինակ՝** Երազիկ Հարությունյան **Բովանդակային չափանիշներ** Ուսումնական ձեռնարկը նախատեսված է ռուսալեզու նախադպրոցականների և կրտսեր տարիքի դպրոցականների համար: Ձեռնարկը մեծապես կնպաստի Ռուսաստանում ապրող հայ երեխաների՝ հայոց լեզվով հաղորդակցական կարողությունների ձևավորմանը և զարգացմանը: **Տեխնիկական չափանիշներ** Չափսը՝ 20 x 28 սմ Էջերի թուղթը՝ 70 գ օֆսեթ էջերի տպ.՝ գունավոր Էջերի քանակը՝ 160	**հատ**	**500**	**3700**	**1850000**	Մինչև 2026թ. օգոստոսի 20-ը

			Կազմի թուղթը՝ 250 գ/քմ կավճապատ ստվարաթուղթ Կազմի տպ.՝ գունավոր Կազմարարությունը՝ թելակար, ջերմասոսինձ, լամինացիա Գրքի քաշը՝ 341գր Գրքի ծավալը՝ 504 սմ^3					
3	**22111110/15**	**Դասագրքեր-3**	Գնման առարկա է հանդիսանում. **«Մայրենի 2».** դասագիրք սփյուռքի դպրոցների համար **Հեղինակ՝** Ջուլիետա Գյուլամիրյան **Բովանդակային չափանիշներ** Պատկերազարդ դասագիրքը նախատեսված է Սփյուռքում մայրենի լեզուն ուսումնառող երեխաների համար: **Տեխնիկական չափանիշներ** Չափսը՝ 17 x 24 սմ Էջերի թուղթը՝ 70 գ օֆսեթ Էջերի տպ.՝ գունավոր Էջերի քանակը՝ 80 Կազմի թուղթը՝ 230 գ/քմ կավճապատ ստվարաթուղթ Կազմի տպ.՝ գունավոր Կազմարարությունը՝ թելակար, ջերմասոսինձ, լամինացիա Գրքի քաշը՝ 136գր Գրքի ծավալը՝ 204սմ^3	**հատ**	**800**	**2000**	**1600000**	Մինչև 2026թ. օգոստոսի 20-ը
4	**22111110/16**	**Դասագրքեր-4**	Գնման առարկա է հանդիսանում. «Մայրենի 3». դասագիրք սփյուռքի դպրոցների համար Հեղինակ՝ Ջուլիետա Գյուլամիրյան **Բովանդակային չափանիշներ** Պատկերազարդ դասագիրքը նախատեսված է Սփյուռքում մայրենի լեզուն ուսումնառող երեխաների համար: Շարունակում է «Մայրենի 2» դասագրքի ուսումնական նյութը: **Տեխնիկական չափանիշներ** Չափսը՝ 17 x 24 սմ Էջերի թուղթը՝ 70 գ օֆսեթ Էջերի տպ.՝ գունավոր Էջերի քանակը՝ 80 Կազմի թուղթը՝ 230 գ/քմ կավճապատ ստվարաթուղթ Կազմի տպ.՝ գունավոր Կազմարարությունը՝ թելակար, ջերմասոսինձ, լամինացիա Գրքի քաշը՝ 133գր Գրքի ծավալը՝ 204սմ^3	**հատ**	**800**	**2000**	**1600000**	Մինչև 2026թ. օգոստոսի 20-ը

5	22111110/17	Դասագրքեր-5	Գնման առարկա է հանդիսանում. **«Մայրենի 4»** **Հեղինակ՝** Ջուլիետա Գյուլամիրյան **Բովանդակային չափանիշներ** Պատկերազարդ դասագիրքը նախատեսված է Սփյուռքում մայրենի լեզուն ուսումնառող երեխաների համար: Շարունակում է «Մայրենի 3» դասագրքի ուսումնական նյութը: **Տեխնիկական չափանիշներ** Չափսը՝ 17 x 24 սմ Էջերի թուղթը՝ 70 գ օֆսեթ Էջերի տպ.՝ գունավոր Էջերի քանակը՝ 120 Կազմի թուղթը՝ 230 գ/քմ կավճապատ ստվարաթուղթ Կազմի տպ.՝ գունավոր Կազմարարությունը՝ թելակար, ջերմասոսինձ, լամինացիա Գրքի քաշը՝ 202գր Գրքի ծավալը՝ 408սմ³	**հատ**	**700**	**2000**	**1400000**	Մինչև 2026թ. օգոստոսի 20-ը
6	22111110/18	Դասագրքեր-6	Գնման առարկա է հանդիսանում. **«Մայրենի 3»**. Մաս 1 **Հեղինակ՝** Ա. Բալայան, Կ. Չիբուխչյան **Բովանդակային չափանիշներ** Դասագիրքը նախատեսված է հանրակրթական հիմնական դպրոցի երրորդ դասարանի համար: **Տեխնիկական չափանիշներ** Չափսը՝ 20.5 x 26 սմ Էջերի թուղթը՝ 70 գ օֆսեթ Էջերի տպ.՝ գունավոր Էջերի քանակը՝ 104 Կազմի թուղթը՝ 235 գ/քմ կավճապատ ստվարաթուղթ Կազմի տպ.՝ գունավոր Կազմարարությունը՝ թելակար, ջերմասոսինձ, լամինացիա Գրքի քաշը՝ 255գր Գրքի ծավալը՝ 266,5 սմ3	**հատ**	**1430**	**3700**	**5291000**	Մինչև 2026թ. օգոստոսի 20-ը
7	22111110/19	Դասագրքեր-7	Գնման առարկա է հանդիսանում. **«Մայրենի 3»**. Մաս 2 **Հեղինակ՝** Ա. Բալայան, Կ. Չիբուխչյան **Բովանդակային չափանիշներ** Դասագիրքը նախատեսված է հանրակրթական հիմնական դպրոցի երրորդ դասարանի համար: **Տեխնիկական չափանիշներ** Չափսը՝ 20.5 x 26 սմ	**հատ**	**1430**	**3700**	**5291000**	Մինչև 2026թ. օգոստոսի 20-ը

			Էջերի թուղթը՝ 70 գ օֆսեթ Էջերի տպ.՝ գունավոր Էջերի քանակը՝ 116 Կազմի թուղթը՝ 235 գ/քմ կավճապատ ստվարաթուղթ Կազմի տպ.՝ գունավոր Կազմարարությունը՝ թելակար, ջերմասոսինձ, լամինացիա Գրքի քաշը՝ 260գր Գրքի ծավալը՝ 373 սմ3					
8	**22111110/20**	**Դասագրքեր-8**	Գնման առարկա է հանդիսանում. **«Մեծ Միեր»**. ուսումնական ձեռնարկ ռուսալեզու սովորողների համար Հեղինակ՝ Ե. Հարությունյան **Բովանդակային չափանիշներ** Երկլեզու ուսումնական ձեռնարկը նախատեսված է հայկական մեկօրյա դպրոցների միջին և ավագ խմբերի ռուսախոս սովորողների համար, որոնք կարճ ժամանակում ոչ մեծ ջանքերի գործադրմամբ կկարողանան հայերեն գրել-կարդալ, խոսել-արտահայտվել: **Տեխնիկական չափանիշներ** Չափը՝ 17 x 24 սմ Էջերի թուղթը՝ 70 գ օֆսեթ Էջերի տպ.՝ գունավոր Էջերի քանակը՝ 176 Կազմի թուղթը՝ 230 գ/քմ կավճապատ ստվարաթուղթ Կազմի տպ.՝ գունավոր Կազմարարությունը՝ թելակար, ջերմասոսինձ, լամինացիա Գրքի քաշը՝ 275գր Գրքի ծավալը՝ 375 սմ3	**հատ**	**500**	**3700**	**1850000**	Մինչև 2026թ. օգոստոսի 20-ը
9	**22111110/21**	**Դասագրքեր-9**	Գնման առարկա է հանդիսանում. «Այբբենարան» (արևմտահայերեն) **Հեղինակ՝** Հ. Զաքարյան **Բովանդակային չափանիշներ** Դասագիրքը նախատեսված է Սփյուռքի մեկօրյա հայկական դպրոցների համար: Ուղղված է սովորողների տառաճանաչությանը և խոսքի ձևավորմանը: **Տեխնիկական չափանիշներ** Չափը՝ 20 x 28 սմ Էջերի թուղթը՝ 70 գ օֆսեթ Էջերի տպ.՝ գունավոր Էջերի քանակը՝ 96 Կազմի թուղթը՝ 250 գ/քմ կավճապատ ստվարաթուղթ Կազմի տպ.՝ գունավոր Կազմարարությունը՝ թելակար, ջերմասոսինձ, լամինացիա	**հատ**	**58**	**3600**	**208800**	Մինչև 2026թ. օգոստոսի 20-ը

			Գքրի քաշը՝ 247գր Գրքի ծավալը՝ 336 սմ^3					
10	**22811130/2**	**Տետրեր-1**	Գնման առարկա է հանդիսանում. **«Ես սովորում եմ գրել Ա1»** /«Զանգակ այբբենարան»-ի աշխատանքային տետր/ **Հեղինակ՝** Ջուլիետա Գյուլամիրյան **Բովանդակային չափանիշներ** Նախատեսված է «Զանգակ» այբբենարանի տեսական նյութը գործնականում կիրառելու համար: **Տեխնիկական չափանիշներ** Չափսը՝ 17 x 24 սմ Տեքստի թուղթը՝ 70 գ օֆսեթ Էջերի տպ.՝ գունավոր Էջերի քանակը՝ 32 Կազմի թուղթը՝ 100 գ/քմ օֆսեթ Կազմի տպ.՝ գունավոր Կազմարարությունը՝ տետրակար Քաշը՝ 53գր Գրքի ծավալը՝ 117 սմ^3	**հատ**	**900**	**500**	**450000**	Մինչև 2026թ. օգոստոսի 20-ը
11	**22811130/3**	**Տետրեր-2**	Գնման առարկա է հանդիսանում. **«Ես սովորում եմ գրել Ա2»** /«Զանգակ այբբենարան»-ի աշխատանքային տետր/ **Հեղինակ՝** Ջուլիետա Գյուլամիրյան **Բովանդակային չափանիշներ** Նախատեսված է «Զանգակ» այբբենարանի տեսական նյութը գործնականում կիրառելու համար: **Տեխնիկական չափանիշներ** Չափսը՝ 17 x 24 սմ Էջերի թուղթը՝ 70 գ օֆսեթ Էջերի տպ.՝ գունավոր Էջերի քանակը՝ 32 Կազմի թուղթը՝ 100 գ/քմ օֆսեթ Կազմի տպ.՝ գունավոր Կազմարարությունը՝ տետրակար Քաշը՝ 53գր Գրքի ծավալը՝ 117 սմ^3	**հատ**	**900**	**500**	**450000**	Մինչև 2026թ. օգոստոսի 20-ը
12	**22811130/4**	**Տետրեր-3**	Գնման առարկա է հանդիսանում. **«Ես սովորում եմ գրել Բ1»** /«Զանգակ այբբենարան»-ի աշխատանքային տետր/ **Հեղինակ՝** Ջուլիետա Գյուլամիրյան	**հատ**	**823**	**500**	**411500**	Մինչև 2026թ. օգոստոսի 20-ը

			Բովանդակային չափանիշներ Նախատեսված է «Զանգակ» այբբենարանի տեսական նյութը գործնականում կիրառելու համար: **Տեխնիկական չափանիշներ** Չափսը՝ 17 x 24 սմ Տեքստի թուղթը՝ 70 գ օֆսեթ Էջերի տպ.՝ գունավոր Էջերի քանակը՝ 24 Կազմի թուղթը՝ 100 գ/քմ օֆսեթ Կազմի տպ.՝ գունավոր Կազմարարությունը՝ տետրակար Քաշը՝ 46գր Գրքի ծավալը՝ 58 սմ^3					
13	22811130/5	Տետրեր-4	Գնման առարկա է հանդիսանում. **«Ես սովորում եմ գրել Բ2»** /«Զանգակ այբբենարան»-ի աշխատանքային տետր/ **Հեղինակ՝** Ջուլիետա Գյուլամիրյան **Բովանդակային չափանիշներ** Նախատեսված է «Զանգակ» այբբենարանի տեսական նյութը գործնականում կիրառելու համար: **Տեխնիկական չափանիշներ** Չափսը՝ 17 x 24 սմ Էջերի թուղթը՝ 70 գ օֆսեթ Էջերի տպ.՝ գունավոր Էջերի քանակը՝ 264 Կազմի թուղթը՝ 100 գ/քմ օֆսեթ Կազմի տպ.՝ գունավոր Կազմարարությունը՝ տետրակար Քաշը՝ 46գր Գրքի ծավալը՝ 58 սմ^3	հատ	871	500	435500	Մինչև 2026թ. օգոստոսի 20-ը
14	22811130/6	Տետրեր-5	Գնման առարկա է հանդիսանում. **«Փոքր Մեր»** աշխատանքային տետր ԱՅԲ **Հեղինակ՝** Երազիկ Հարությունյան **Բովանդակային չափանիշներ** Նախատեսված է 5–7 տարեկան երեխաների համար, որոնք դեռևս իրենց առաջին լեզուն յուրացնելու և ամրապնդելու փուլում են: Նրանք հայերեն բանավոր խոսքի հետ միասին կարող են ճանաչել հայերեն տպագիր տառերը և կարդալ բառեր, փոքրիկ, պարզ նախադասություններ: Տետրի առաջադրանքները նպաստում են հայերեն խոսքի զարգացմանը, բառապաշարի ձևավորմանը: **Տեխնիկական չափանիշներ**	հատ	800	2250	1800000	Մինչև 2026թ. օգոստոսի 20-ը

			Չափսը՝ 20 x 28 սմ Էջերի թուղթը՝ 70 գ օֆսեթ Էջերի տպ.՝ գունավոր Էջերի քանակը՝ 56 Կազմի թուղթը՝ կավճապատ 170 գ/քմ Կազմի տպ.՝ գունավոր Կազմարարությունը՝ տետրակար Քաշը՝ 124գր Ծավալը՝ 168 սմ^3					
15	**22811130/7**	**Տետրեր-6**	Գնման առարկա է հանդիսանում. **«Փոքր Միեր»** աշխատանքային տետր ԲԵՆ, 1-ին մաս **Հեղինակ՝** Երազիկ Հարությունյան **Բովանդակային չափանիշներ** «ԲԵՆ» տետրի առաջին 12 դասերը բաղկացած են 2 մասից: 1-ին մասը այն երեխաների համար է, որոնք նոր են սովորում գրել և կարդալ: Նրանք 2-րդ մասը կարող են կատարել գրքի դասերին զուգահեռ, բանավոր: Իսկ այն երեխաները, որոնք արդեն տառաճանաչ են, գիտեն գրել և կարդալ հայերեն, 2-րդ մասի վարժությունները կատարում են գրավոր: 13-րդ դասից հետո ընդհանուր գրավոր դասեր են բոլոր երեխաների համար:Վարժություններն ու առաջադրանքները երեխաներին սովորեցնում են պարզ, գործնական քերականություն և ամրապնդում են գրքի համապատասխան թեման: **Տեխնիկական չափանիշներ** Չափսը՝ 20 x 28 սմ Էջերի թուղթը՝ 70 գ օֆսեթ Էջերի տպ.՝ միագույն Էջերի քանակը՝ 64 Կազմի թուղթը՝ կավճապատ 170 գ/քմ Կազմի տպ.՝ գունավոր Կազմարարությունը՝ տետրակար Քաշը՝ 156գր. Ծավալը՝ 168գր.	**հատ**	**900**	**2000**	**1800000**	Մինչև 2026թ. օգոստոսի 20-ը
16	**22811130/8**	**Տետրեր-7**	Գնման առարկա է հանդիսանում. **«Փոքր Միեր»** աշխատանքային տետր ԲԵՆ, 2-րդ մաս **Հեղինակ՝** Երազիկ Հարությունյան **Բովանդակային չափանիշներ** «ԲԵՆ» տետրի առաջին 12 դասերը բաղկացած են 2 մասից: 1-ին մասը այն երեխաների համար է, որոնք նոր են սովորում գրել և կարդալ: Նրանք 2-րդ մասը կարող են կատարել գրքի դասերին զուգահեռ, բանավոր: Իսկ այն երեխաները, որոնք արդեն տառաճանաչ են, գիտեն գրել և կարդալ	**հատ**	**900**	**2000**	**1800000**	Մինչև 2026թ. օգոստոսի 20-ը

			հայերեն, 2–րդ մասի վարժությունները կատարում են գրավոր: 13–րդ դասից հետո ընդհանուր գրավոր դասեր են բոլոր երեխաների համար: Վարժություններն ու առաջադրանքները երեխաներին սովորեցնում են պարզ, գործնական քերականություն և ամրապնդում են գրքի համապատասխան թեման: **Տեխնիկական չափանիշներ** Չափսը՝ 20 x 28 սմ Էջերի թուղթը՝ 70 գ օֆսեթ Էջերի տպ.՝ միագույն Էջերի քանակը՝ 64 Կազմի թուղթը՝ կավճապատ 170 գ/քմ Կազմի տպ.՝ գունավոր Կազմարարությունը՝ տետրակար Քաշը՝ 140գր. Ծավալը՝ 168գր.					
17	22811130/10	Տետրեր-8	Գնման առարկա է հանդիսանում. **«Մայրենի 2. 2-դաս. աշխատանքային տետր 1»** սփյուռքի դպրոցների համար: **Հեղինակ՝** Ջուլիետա Գյուլամիրյան **Բովանդակային չափանիշներ** Նախատեսված է Սփյուռքի դպրոցների համար «Մայրենի 2» դասագրքի ուսուցանվող նյութը գործնականում կիրառելու համար: **Տեխնիկական չափանիշներ** Չափսը՝ 17 x 24 սմ Էջերի թուղթը՝ 70 գ օֆսեթ Էջերի տպ.՝ երկգույն Էջերի քանակը՝ 32 Կազմի թուղթը՝ 100 գ/քմ Կազմի տպ.՝ գունավոր Կազմարարությունը՝ տետրակար Գրքի ծավալը՝ 81.6սմ^3	**հատ**	**1000**	**500**	**500000**	Մինչև 2026թ. օգոստոսի 20-ը

18	22811130/11	Տետրեր-9	Գնման առարկա է հանդիսանում. **«Մայրենի 2» 2-դաս. աշխատանքային տետր 2»** սփյուռքի դպրոցների համար: **Հեղինակ՝** Ջուլիետա Գյուլամիրյան **Բովանդակային չափանիշներ** Նախատեսված է Սփյուռքի դպրոցների համար «Մայրենի 2» դասագրքի ուսուցանվող նյութը գործնականում կիրառելու համար: **Տեխնիկական չափանիշներ** Չափսը՝ 17 x 24 սմ Էջերի թուղթը՝ 70 գ օֆսեթ Էջերի տպ.՝ երկգույն Էջերի քանակը՝ 32 Կազմի թուղթը՝ 100 գ/քմ Կազմի տպ.՝ գունավոր Կազմարարությունը՝ տետրակար Գրքի ծավալը՝ 81.6սմ³	**հատ**	**1000**	**500**	**500000**	Մինչև 2026թ. օգոստոսի 20-ը
19	22811130/12	Տետրեր-10	Գնման առարկա է հանդիսանում. **«Մայրենի 3. 3-դաս. աշխատանքային տետր 1»** սփյուռքի դպրոցների համար: **Հեղինակ՝** Ջուլիետա Գյուլամիրյան **Բովանդակային չափանիշներ** Նախատեսված է Սփյուռքի դպրոցների համար «Մայրենի 3» դասագրքի ուսուցանվող նյութը գործնականում կիրառելու համար: **Տեխնիկական չափանիշներ** Չափսը՝ 17 x 24 սմ Էջերի թուղթը՝ 70 գ օֆսեթ Էջերի տպ.՝ երկգույն Էջերի քանակը՝ 32 Կազմի թուղթը՝ 100 գ/քմ Կազմի տպ.՝ գունավոր Կազմարարությունը՝ տետրակար Գրքի ծավալը՝ 81.6սմ³	**հատ**	**1000**	**500**	**500000**	Մինչև 2026թ. օգոստոսի 20-ը

20	22811130/13	Տետրեր-11	Գնման առարկա է հանդիսանում. **«Մայրենի 3. 3-դաս. աշխատանքային տետր 2»** սփյուռքի դպրոցների համար: **Հեղինակ՝** Ջուլիետա Գյուլամիրյան **Բովանդակային չափանիշներ** Նախատեսված է Սփյուռքի դպրոցների համար «Մայրենի 3» դասագրքի ուսուցանվող նյութը գործնականում կիրառելու համար: **Տեխնիկական չափանիշներ** Չափսը՝ 17 x 24 սմ Էջերի թուղթը՝ 70 գ օֆսեթ Էջերի տպ.՝ երկգույն Էջերի քանակը՝ 32 Կազմի թուղթը՝ 100 գ/քմ Կազմի տպ.՝ գունավոր Կազմարարությունը՝ տետրակար Գրքի ծավալը՝ 81.6սմ³	**հատ**	**1000**	**500**	**500000**	Մինչև 2026թ. օգոստոսի 20-ը
21	22811130/14	Տետրեր-12	Գնման առարկա է հանդիսանում. **«Մայրենի 4. աշխատանքային տետր 1»** սփյուռքի դպրոցների համար: **Հեղինակ՝** Ջուլիետա Գյուլամիրյան **Բովանդակային չափանիշներ** Նախատեսված է Սփյուռքի դպրոցների համար «Մայրենի 4» դասագրքի ուսուցանվող նյութը գործնականում կիրառելու համար: **Տեխնիկական չափանիշներ** Չափսը՝ 17 x 24 սմ Էջերի թուղթը՝ 70 գ օֆսեթ Էջերի տպ.՝ երկգույն Էջերի քանակը՝ 32 Կազմի թուղթը՝ 100 գ/քմ Կազմի տպ.՝ գունավոր Կազմարարությունը՝ տետրակար Գրքի ծավալը՝ 66 սմ³	**հատ**	**750**	**500**	**375000**	Մինչև 2026թ. օգոստոսի 20-ը

22	22811130/15	Տետրեր-13	Գնման առարկա է հանդիսանում. **«Մայրենի 4. աշխատանքային տետր 2»** սփյուռքի դպրոցների համար: **Հեղինակ՝** Ջուլիետա Գյուլամիրյան **Բովանդակային չափանիշներ** Նախատեսված է Սփյուռքի դպրոցների համար «Մայրենի 4» դասագրքի ուսուցանվող նյութը գործնականում կիրառելու համար: **Տեխնիկական չափանիշներ** Չափսը՝ 17 x 24 սմ Էջերի թուղթը՝ 70 գ օֆսեթ Էջերի տպ.՝ երկգույն Էջերի քանակը՝ 32 Կազմի թուղթը՝ 100 գ/քմ Կազմի տպ.՝ գունավոր Կազմարարությունը՝ տետրակար Գրքի ծավալը՝ ՝ 66 սմ³	**հատ**	**750**	**500**	**375000**	Մինչև 2026թ. օգոստոսի 20-ը
23	22811130/16	Տետրեր-14	Գնման առարկա է հանդիսանում. **«Մեծ Միեր».** աշխատանքային տետր **Հեղինակ՝** Երազիկ Հարությունյան **Բովանդակային չափանիշներ** «Մեծ Միեր» երկլեզու ուսումնական ձեռնարկին կից այս աշխատանքային տետրն օգնում է յուրացնելու և ամրապնդելու դասավանդվող հայերեն նյութը ռուսերենի միջոցով: Առաջադրանքներում կիրառված են միայն այն բառերը, որոնք արդեն տրվել են դասագրքում: **Տեխնիկական չափանիշներ** Չափսը՝ 17 x 24 սմ Էջերի թուղթը՝ 70 գ օֆսեթ Էջերի տպ.՝ միագույն Էջերի քանակը՝ 144 Կազմի թուղթը՝ կավճապատ ստվարաթուղթ 230 գ/քմ Կազմի տպ.՝ գունավոր Կազմարարությունը՝ թելակար, լամինացիա, ջերմասոսինձ Քաշը՝ 226գր Ծավալը՝ 326 սմ³	**հատ**	**500**	**2880**	**1440000**	Մինչև 2026թ. օգոստոսի 20-ը

24	22111100/2	**Ուսուցողական գրքեր-1**	Գնման առարկա է հանդիսանում. **«Իմ առաջին ընթերցարան»** համացանցային դասագիրք **Հեղինակ՝** Ջուլիետա Գյուլամիրյան **Բովանդակային չափանիշներ** Դասագիրքը նախատեսված է հայկական սփյուռքի մեկօրյա դպրոցների համար: Այն հաջորդում է Զանգակ կամ Կռունկ այբբենարաններին: **Տեխնիկական չափանիշներ** Չափսը՝ 20 x 28 սմ Էջերի թուղթը՝ 70 գ օֆսեթ Էջերի տպ.՝ գունավոր Էջերի քանակը՝ 72 Կազմի թուղթը՝ 250 գ/քմ կավճապատ ստվարաթուղթ Կազմի տպ.՝ գունավոր Կազմարարությունը՝ թելակար, ջերմասոսինձ, լամինացիա Գրքի քաշը՝ 180գր Գրքի ծավալը՝ 280 սմ^3	**հատ**	**350**	**2700**	**945000**	Մինչև 2026թ. օգոստոսի 20-ը
25	22111100/3	**Ուսուցողական գրքեր-2**	Գնման առարկա է հանդիսանում. **«Ընթերցարան Ա» /արևմտահայերեն/** **Հեղինակ՝** Հ. Զաքարյան **Բովանդակային չափանիշներ** Այբբենարանի տրամաբանական շարունակությունն է. տառաճանաչությունից հետո սովորողները կարող են ձեռք բերել բառապաշար և զարգացնել գրավոր ու բանավոր խոսքը: **Տեխնիկական չափանիշներ** Չափսը՝ 20 x 28 սմ Էջերի թուղթը՝ 70 գ օֆսեթ Էջերի տպ.՝ գունավոր Էջերի քանակը՝ 96 Կազմի թուղթը՝ կավճապատ ստվարաթուղթ 250 գ/քմ Կազմի տպ.՝ գունավոր Կազմարարությունը՝ թելակար, ջերմասոսինձ, լամինացիա Գքրի քաշը՝ 245գր Գրքի ծավալը՝ 336 սմ^3	**հատ**	**38**	**3600**	**136800**	Մինչև 2026թ. օգոստոսի 20-ը
26	22111100/4	**Ուսուցողական գրքեր-3**	Գնման առարկա է հանդիսանում. **«Արևմտահայերենի քերականություն Ա»** **Բովանդակային չափանիշներ** «Արևմտահայերենի քերականություն Ա» նախատեսված է Սփյուռքի հայկական դպրոցների համար: **Տեխնիկական չափանիշներ** Չափսը՝ 17 x 24 սմ Էջերի թուղթը՝ 70 գ օֆսեթ	**հատ**	**22**	**3150**	**69300**	Մինչև 2026թ. օգոստոսի 20-ը

			Էջերի տպ.՝ գունավոր Էջերի քանակը՝ 144 Կազմի թուղթը՝ 350 գ/քմ կավճապատ ստվարաթուղթ Կազմի տպ.՝ գունավոր Կազմարարությունը՝ թելակար, լամինացիա, ջերմասոսինձ Քաշը՝ 230 գր Ծավալը՝ 367,2 սմ^3					
27	22111100/5	**Ուսուցողական գրքեր-4**	Գնման առարկա է հանդիսանում. **«Արևմտահայերենի քերականություն 2»** **Բովանդակային չափանիշներ** «Արևմտահայերենի քերականություն 2» նախատեսված է Սփյուռքի հայկական դպրոցների համար: **Տեխնիկական չափանիշներ** Չափսը՝ 17 x 24 սմ Էջերի թուղթը՝ 70 գ օֆսեթ Էջերի տպ.՝ գունավոր Էջերի քանակը՝ 168 Կազմի թուղթը՝ 350 գ/քմ կավճապատ ստվարաթուղթ Կազմի տպ.՝ գունավոր Կազմարարությունը՝ թելակար, լամինացիա, ջերմասոսինձ Քաշը՝ 270 գր Ծավալը՝ 367,2 սմ^3	**հատ**	**21**	**2700**	**56700**	Մինչև 2026թ. օգոստոսի 20-ը
28	22111100/6	**Ուսուցողական գրքեր-5**	Գնման առարկա է հանդիսանում. **«Համառոտ պատմություն հայոց».** **Հեղինակ՝** Արտակ Մովսիսյան **Բովանդակային չափանիշներ** Գրքում համառոտ և ամբողջական ներկայացված է հայոց պատմությունը հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը: Հանրամատչելի շարադրանքը ավելի ընկալելի դարձնելու նպատակով գիրքն առատորեն պատկերազարդված է և հագեցած է քարտեզներով: Հասցեագրված է Հայաստանի պատմությամբ և հայագիտության խնդիրներով հետաքրքրվող ընթերցողներին: **Տեխնիկական չափանիշներ** Չափսը՝ 17 x 24 սմ Էջերի թուղթը՝ 70 գ օֆսեթ Էջերի տպ.՝ չորս գույն Էջերի քանակը՝ 264 Կազմի թուղթը՝ 230 գ/քմ կավճապատ ստվարաթուղթ Կազմի տպ.՝ գունավոր Կազմարարությունը՝ թելակար, ջերմասոսինձ, լամինացիա Քաշը՝ 410 գր	**հատ**	**200**	**2500**	**500000**	Մինչև 2026թ. օգոստոսի 20-ը

			Գրքի ծավալը՝ 530սմ³					
29	22111100/7	Ուսուցողական գրքեր-6	Գնման առարկա է հանդիսանում. **«Հայոց պատմություն» /գիրք, հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը/.** **Հեղինակ՝** Է. Դանիելյան, Ա. Մելքոնյան **Բովանդակային չափանիշներ** Գրքում համառոտակի շարադրված է հայ ժողովրդի ամբողջական պատմությունը հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը: Այն գրված է աղբյուրագիտական հիմքի վրա՝ օգտագործելով համապատասխան մասնագիտական գրականությունը: Գրքում հաշվի են առնված պատմագիտական վերջին ձեռքբերումները, և հնարավորին չափ լուսաբանված են մի շարք հիմնախնդիրներ: Գիրքը նախատեսվում է բուհերի ուսանողների, բուհ ընդունվողների, պատմության ուսուցիչների և ընթերցող լայն հասարակության համար: **Տեխնիկական չափանիշներ** Չափսը՝ 17 x 24 սմ Էջերի թուղթը՝ 70 գ օֆսեթ Էջերի տպ.՝ սև, գունավոր ներդիր Էջերի քանակը՝ 352 Կազմի թուղթը՝ 300 գ/քմ կավճապատ ստվարաթուղթ Կազմի տպ.՝ գունավոր Կազմարարությունը՝ թելակար, ջերմասոսինձ, լամինացիա Գրքի ծավալը՝ 816սմ³	**հատ**	**201**	**2600**	**522600**	Մինչև 2026թ. օգոստոսի 20-ը

** 1-ից 29-րդ չափաբաժինների համար.*

1. *Ապրանքները մատակարարվում են «Ռուբեն Խաչատրյան» ԱՁ-ին (հասցե՝ ք. Երևան, Արին Բերդի 7/3)՝ ի պահ: Տեղափոխումը և բեռնաթափումը իրականացվում է Վաճառողի կողմից:*
2. *Ապրանքները պետք է լինեն նոր և չօգտագործված:*

Подписано цифровой подписью:
HAKOBYAN HASMIK 5610800161
DN: c=AM, sn=••••••••,
givenName=••••••,
serialNumber=5bdc672203a3,
cn=HAKOBYAN HASMIK
5610800161
Дата: 2026.06.09 19:19:56 +04'00'

ԳՆՈՐԴ

Հ. Հակոբյան
(ստորագրություն)

Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

Ս. Մկրտչյան
(ստորագրություն)

Կ.Տ

Digitally signed by MKRTCHYAN SOKRAT
3510570316
Date: 2026.06.09 13:54:32 AMT

Հավելված N 2

«10» «06» *2026թ. կնքված*

ՀՀԿԳՄՍՆՄԱՊՁԲ-26/58 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի															
Հրա-վերով նախա-տեսված չափա-բաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասա-կարգման (CPV)	**անվանումը**	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում.												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	**Ընդամենը**
1	**22111110/13**	**Դասագրքեր-1**	-	-	-	-	-	2322000	2322000	2322000	2322000	2322000	2322000	2322000	**2322000**
2	**22111110/14**	**Դասագրքեր-2**	-	-	-	-	-	1850000	1850000	1850000	1850000	1850000	1850000	1850000	**1850000**
3	**22111110/15**	**Դասագրքեր-3**	-	-	-	-	-	1600000	1600000	1600000	1600000	1600000	1600000	1600000	**1600000**
4	**22111110/16**	**Դասագրքեր-4**	-	-	-	-	-	1600000	1600000	1600000	1600000	1600000	1600000	1600000	**1600000**
5	**22111110/17**	**Դասագրքեր-5**	-	-	-	-	-	1400000	1400000	1400000	1400000	1400000	1400000	1400000	**1400000**

6	22111110/18	Դասագրքեր-6	-	-	-	-	-	5291000	5291000	5291000	5291000	5291000	5291000	5291000	5291000
7	22111110/19	Դասագրքեր-7	-	-	-	-	-	5291000	5291000	5291000	5291000	5291000	5291000	5291000	5291000
8	22111110/20	Դասագրքեր-8	-	-	-	-	-	1850000	1850000	1850000	1850000	1850000	1850000	1850000	1850000
9	22111110/21	Դասագրքեր-9	-	-	-	-	-	208800	208800	208800	208800	208800	208800	208800	208800
10	22811130/2	Տետրեր-1	-	-	-	-	-	450000	450000	450000	450000	450000	450000	450000	450000
11	22811130/3	Տետրեր-2	-	-	-	-	-	450000	450000	450000	450000	450000	450000	450000	450000
12	22811130/4	Տետրեր-3	-	-	-	-	-	411500	411500	411500	411500	411500	411500	411500	411500
13	22811130/5	Տետրեր-4	-	-	-	-	-	435500	435500	435500	435500	435500	435500	435500	435500
14	22811130/6	Տետրեր-5	-	-	-	-	-	1800000	1800000	1800000	1800000	1800000	1800000	1800000	1800000

15	22811130/7	Տետրեր-6	-	-	-	-	-	1800000	1800000	1800000	1800000	1800000	1800000	1800000	1800000
16	22811130/8	Տետրեր-7	-	-	-	-	-	1800000	1800000	1800000	1800000	1800000	1800000	1800000	1800000
17	22811130/10	Տետրեր-8	-	-	-	-	-	500000	500000	500000	500000	500000	500000	500000	500000
18	22811130/11	Տետրեր-9	-	-	-	-	-	500000	500000	500000	500000	500000	500000	500000	500000
19	22811130/12	Տետրեր-10	-	-	-	-	-	500000	500000	500000	500000	500000	500000	500000	500000
20	22811130/13	Տետրեր-11	-	-	-	-	-	500000	500000	500000	500000	500000	500000	500000	500000
21	22811130/14	Տետրեր-12	-	-	-	-	-	375000	375000	375000	375000	375000	375000	375000	375000
22	22811130/15	Տետրեր-13	-	-	-	-	-	375000	375000	375000	375000	375000	375000	375000	375000
23	22811130/16	Տետրեր-14	-	-	-	-	-	1440000	1440000	1440000	1440000	1440000	1440000	1440000	1440000

24	22111100/2	Ուսուցողական գրքեր-1	-	-	-	-	-	945000	945000	945000	945000	945000	945000	945000	**945000**
25	22111100/3	Ուսուցողական գրքեր-2	-	-	-	-	-	136800	136800	136800	136800	136800	136800	136800	**136800**
26	22111100/4	Ուսուցողական գրքեր-3	-	-	-	-	-	69300	69300	69300	69300	69300	69300	69300	**69300**
27	22111100/5	Ուսուցողական գրքեր-4	-	-	-	-	-	56700	56700	56700	56700	56700	56700	56700	**56700**
28	22111100/6	Ուսուցողական գրքեր-5	-	-	-	-	-	500000	500000	500000	500000	500000	500000	500000	**500000**
29	22111100/7	Ուսուցողական գրքեր-6	-	-	-	-	-	522600	522600	522600	522600	522600	522600	522600	**522600**

** Վճարման ենթակա գումարները ներկայացված են սահմանված կարգով:*

ՀԱՅՏ. Հ.

Подписано цифровой подписью:
HAKOBYAN HASMIK 5610800161
DN: c=AM, sn=••••••••,
givenName=••• ••••••••
serialNumber=5bdc672203a3,
cn=HAKOBYAN HASMIK 5610800161
Дата: 2026.06.09 19:19:34 +04'00'

(ստորագրություն)

Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

---------- **Ս. Մկրտչյան**
(ստորագրություն)

Կ.Տ

Digitally signed by MKRTCHYAN SOKRAT 3510570316
Date: 2026.06.09 13:53:10 AMT